UDC 37.025.7+ 373.2
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.024

ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Պողոսյան Նաիրա
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
nairapoghosyan@yahoo.com
http://orcid.org/0000-0002-2204-2370

Ամփոփում

Ժամանակակից գլոբալացող աշխարհի սոցիալ-մշակութային մարտահրավերներին ընդառաջ բազմալեզվությունն ու դրա ազդեցությունը մարդու մտածողության ու խոսքի ձևավորման և զարգացման վրա աննախադեպ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անխուսափելի ներգրավվածությունն այդ գործընթացում հանգեցնում է խիստ հակասական արդյունքների: Վերոնշյալ հարցի ուսումնասիրությունը բազմամակարդակ, միջմասնագիտական հետազոտությունների առարկա է և անհերքելի արդիականություն է ձեռք բերել վերջին տասնամյակների ընթացքում: Այսպես, մինչդեռ լեզվակրթության քաղաքականության տեսանկյունից հարցն իրավացիորեն շարունակաբար դիտարկվել է դրական լույսի ներքո՝ կարևորելով ժամանակակից աշխարհում մարդու կողմից մի քանի լեզուների տիրապետման խնդիրը, դրա առավելություններն ու դրական կողմերը, ապա՝ հոգելեզվաբանության տեսանկյունից մի քանի լեզվի համաժամանակյա կամ տարաժամանակյա առկայությունը երեխայի կյանքում, հատկապես վաղ մանկության շրջանում, կարող է պատճառ հանդիսանալ խոսքի զարգացման լուրջ դժվարությունների: Նյարդալեզվաբանության տեսանկյունից բազմալեզու միջավայրը բացառիկ դրական ազդեցություն կարող է ունենալ երեխայի զարգացող ուղեղում նյարդային բջիջների միջև շարունակաբար ձևավորվող կապերի, միկրոկապերի, ինչպես նաև դրանց բազմազանության վրա: Իսկ մարդու կողմից առհասարակ կյանքի ընթացքում նոր լեզուներ սովորելը կարող է կանխել բազմաթիվ հիվանդություններ, ինչպիսիք են Ալցհայմերը, Պարկինսոնը, տարիքային թուլամտությունը և այլն [9]: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ անձի բազմալեզվությունն ինքնին ուշագրավ է հետազոտողների լայն շրջանակի համար, քանի որ այն կարող է մարդու կյանքում ունենալ ճակատագրական դեր ու նշանակություն՝ պայմանավորված այն հանգամանքով, թե երբ (ո՞ր տարիքում ու որքա՞ն ժամանակամիջոցում) և ինչպես (ի՞նչ պայմաններում) է ձևավորվել այն: Սույն հոդվածում մեր նպատակն է հստակեցնել «անձի բազմալեզվություն» հասկացության բովանդակությունը, ներկայացնել մտածողության և խոսքի օնտոգենեզը, այն է՝ զարգացման փուլերը մարդու կյանքում՝ սկսած նրա ծնունդից, ինչպես նաև ուսումնասիրել և դուրս բերել այն դրական ու բացասական ազդեցությունները, որոնք կարող է ունենալ բազմալեզվությունը երեխայի մտածողության ու խոսքի զարգացման վրա: Ուսումնասիրության առանցքում հատկապես կդիտարկվեն զրոյից վեց տարեկան երեխաները, քանի որ հիմնական խնդիրները, որոնց հանգեցնում է բազմալեզվությունը, հանդիպում են առավելապես այս տարիքի երեխաների շրջանում:

Բանալի բառեր՝ *երկլեզվություն/երկլեզվակրություն, անձի բազմալեզվություն, խոսքային մտածողություն, խոսքի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ:*

Հիմնախնդիրը: Սույն հոդվածն առնչվում է երեխայի խոսքի և մտածողության վրա բազմալեզու միջավայրի ազդեցությանը, ինչպես դրական, այնպես էլ բացասական տեսանկյունից: Քննության են առնվում համաժամանակյա և տարաժամանակյա, ինչպես

նաև բնական և արհեստական բազմալեզվության պայմաններում մեծացող երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման առանձնահատկություններն ու խնդիրները:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Հետազոտության ընթացքում քննության են առնվել լեզվակրթական (ԼԻԻՀՀ), լեզվաբանական (Пашук С., Ցեյտլին Ս.) և հոգելեզվաբանական (Թովմասյան Հ, Field J., Залевская А.) հետազոտություններ, որոնք առնչվում են երեխայի խոսքի ու մտածողության զարգացման օնտոգենեզին (Թովմասյան Հ.), ինչպես նաև երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման առանձնահատկություններին (Зимняя А., Ցեյտլին Ս., Bialystok E.):

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և պարզել երկլեզու ու բազմալեզու միջավայրի դրական և բացասական ազդեցությունը երեխայի խոսքի և մտածողության զարգացման վրա դեռևս նախախոսքային ու լեզվաճանաչողական փուլերում:

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ ճշգրտվել և հիմնավորվել է երեխայի խոսքի և մտածողության զարգացման վրա բազմալեզու միջավայրի դրական ու բացասական ազդեցությունը, արվել են առաջարկություններ դեռևս նախախոսքային ու լեզվաճանաչողական փուլերում երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման գործընթացն առավել արդյունավետ և անվնաս կազմակերպելու համար:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Սույն հետազոտությամբ համադրվել և հակադրվել են անձի բազմալեզվության շուրջ միջմասնագիտական (լեզվական, լեզվաբանական, հոգեբանական, հոգելեզվանական, նյարդահոգելեզվաբանական) հարակից ոլորտների մոտեցումները, ինչպես նաև բազմալեզու միջավայրի դրական և բացասական ազդեցությունը երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման վրա՝ այդ գործընթացն առավել ներդաշնակ և արդյունավետ կազմակերպելու հանգամանքները ճշգրտելու համար:

Սույն հետազոտությամբ մեր խնդիրն է ուսումնասիրել և պարզել երկլեզու և բազմալեզու միջավայրի ազդեցությունը երեխայի խոսքի ու մտածողության զարգացման վրա դեռևս նախախոսքային և լեզվաճանաչողական փուլերում և ներկայացնել այն բոլոր դրական ու բացասական հետևանքները, որոնք կարող են խթանել կամ խաթարել երեխայի խոսքի և մտածողության բնականոն ձևավորումն ու զարգացումը վաղ մանկական տարիքում: Այդ իսկ պատճառով մեր կողմից անհրաժեշտ է համարվել հստակեցնել «անձի բազմալեզվություն» հասկացության բովանդակությունը, ներկայացնել մտածողության և խոսքի օնտոգենեզը, այն է՝ զարգացման փուլերը մարդու կյանքում՝ սկսած նրա ծնունդից, ինչպես նաև ուսումնասիրել և դուրս բերել այն դրական ու բացասական ազդեցությունները, որոնք կարող է ունենալ բազմալեզվությունը երեխայի մտածողության և խոսքի զարգացման վրա վաղ մանկական տարիքում:

Հանրալեզվաբանության տեսանկյունից լեզուն սոցիոմշակութային երևույթ է, ինչը ենթադրում է համապատասխան գիտելիքների և կարողությունների ձևավորում լեզվակիր ժողովրդի սոցիալ-մշակութային տարրերի շուրջ, մասնավորապես՝ քաղաքավարության կանոններ, տարբեր սերունդների, սեռերի, սոցիալական խավերի ու հասարակական խմբերի միջև հարաբերությունների ընդունված նորմեր, ինչն անմիջականորեն դրական առումով ազդում է տարբեր մշակույթների ներկայացուցիչների հաղորդակցության վրա, ընդ որում՝ մասնակիցները կարող են նույնիսկ չգիտակցել այդ ազդեցությունը [2, էջ 30]:

Տարիքային ֆիզիոլոգիայի տեսանկյունից երեխայի կյանքում օտար լեզուների ներմուծումը վաղ տարիքում առավել նպաստավոր է լեզվախոսքային պոտենցիալ կարողությունների, մասնավորապես իմիտացիայի և ընդօրինակման կարողությունների ակտիվության տեսանկյունից, որոնք վեց տարեկանից սկսում են աստիճանաբար նահանջել [9]:

Մասնագիտացված լոգոպեդները հետևում են այն կարծիքին, որ երկրորդ լեզուն վաղ մանկական տարիքում կարող է խոչընդոտել խոսքային մտածողության զարգացման գործընթացը՝ նպաստելով խոսքային խնդիրների ձևավորմանը: Սակայն կա նաև հակառակ տեսակետը, համաձայն որի՝ երեխայի երկլեզու դաստիարակությունը դիտվում է որպես դրական զարգացում, որը նպաստում է ոչ միայն բանավոր խոսքի, այլ նաև երեխայի մտավոր, սոցիալ-ճանաչողական համալիր կարողությունների զարգացմանը:

Հարցն առավել շոշափելի դիտարկելու նպատակով, կցանկանայինք նախևառաջ սահմանել «բազմալեզվություն» հասկացությունը՝ որպես եզր և տարանջատել մի շարք այլ հասկացություններ, որոնք թյուրըմբռնումների առիթ են տալիս՝ կապված անձի բազմալեզվության հետ: Մասնագիտական գրականության մեջ հաճախ են հանդիպում «երկլեզվություն», «երկլեզվակրություն», «բիլինգվիզմ», «բազմալեզվություն» եզրերը՝ որպես երկու կամ ավելի լեզուների տիրապետում ու կիրառում:

Այսպես, Եվրոպայի խորհրդի կողմից որդեգրված լեզվակրթության քաղաքականության մեջ վերջին տարիներին կարևորվում է բազմալեզվության հայեցակարգը: Անհատի բազմալեզվությունը (plurilingulism) նույնը չէ, ինչ հասարակության բազմալեզվությունը (multilingualism), որը ենթադրում է մի քանի լեզուների իմացություն կամ տվյալ հասարակության մեջ տարբեր լեզուների համագոյակցություն: Հասարակության բազմալեզվության կարելի է հասնել դպրոցում կամ կրթական համակարգում սովորելու համար առաջարկվող լեզուներն ավելացնելու ճանապարհով կամ երեխաներին մեկից ավելի օտար լեզու սովորել խրախուսելով: Մինչդեռ անհատի բազմալեզվության մոտեցումն ընդգծում է այն հանգամանքը, որ անհատի լեզվական փորձն ընդլայնվում է իր մշակութային միջավայրում՝ ընտանիքում գործածվող լեզվից մինչև տվյալ հանրության հաղորդակցության լեզուն, ապա մինչև ուրիշ ազգերի լեզուների իմացություն, որոնք անհատը սովորում է դպրոցում, քոլեջում կամ անմիջական շփման միջոցով: Այդ բոլոր լեզուներն ու դրանց մշակույթն անհատը չի պահում իրարից անջատ «մտավոր խցերում», այլ կառուցում է իր հաղորդակցական կարողությունները, որոնցում իրենց ներդրումն ունեն բոլոր լեզուների իմացությունն ու լեզվական փորձը, որտեղ լեզուները փոխկապակցված են և փոխազդում են: Տարբեր իրավիճակներում անհատը ճկունորեն կարող է օգտագործել իր կարողությունների ցանկացած «մասը» կոնկրետ զրուցակցի հետ արդյունավետ հաղորդակցվելու համար: Օրինակ՝ զրուցակիցները կարող են մի լեզվից անցնել մյուսին՝ օգտագործելով մի լեզվով մտքերն արտահայտելու և մեկ այլ լեզու հասկանալու իրենց կարողությունները: Կամ, օրինակ, անհատը կարող է կիրառել մի շարք լեզուների իր իմացությունն ու լեզվակռահման կարողությունը՝ ընկալելու կամ ճանաչելու լեզվական միավորներ, որոնք իրեն տվյալ լեզվում առաջին անգամ են հանդիպում [2, էջ 21]:

Հոգելեզվաբանության մեջ երեխայի խոսքի առանձնահատկությունների հետազոտությունը դիտարկվում է որպես առանձին ճյուղ՝ անվանվելով երեխայի խոսքի անհատական զարգացում կամ լեզվի յուրացման լեզվաբանություն (Developmental Psycholinguistics): Ի դեպ, ռուս հոգելեզվաբանական գրականության մեջ առավել տա-

բածված է «բիլինգվիզմ» եզրը (билингвизм), որը հաճախ ներառում է «անձի երկլեզվություն» (билингвизм), «եռալեզվություն» (трилингвизм) և «բազմալեզվություն» (мультилингвизм, многоязычие, полилингвизм) հասկացությունները:

Նախկինում ավանդաբար ընդունված տեսակետ է եղել այն, որ երկլեզվակրությունն ամենից քիչ տարածված է մինչև ութ տարեկան երեխաների մոտ, քանի որ դրա տարածման սահմանները որոշվել են ընտանեկան միջավայրով և ուսումնական հաստատությունների ազդեցությամբ:

Ներկայումս, սակայն, բազմալեզվության տարածման ժամանակակից աղբյուրները դիտարկելով՝ հարկ է առանձնակի նշել տեղեկատվական տեխնոլոգիաների, զանազան գաջեթների կամ «խելացի էկրանների» ազդեցությունը երեխայի մտածողության և խոսքի զարգացման վրա: Մասնավորապես տարբեր սոցիալական հարթակներում առկա ժամանցային ու ուսուցողական տեսալսողական, գունագեղ, երբեմն գերխթանող (հիպեր ստիմուլացնող) բազմալեզու հոլովակներն ու խաղերը մեծ տարածում են գտնում հատկապես այն ընտանիքներում, որտեղ մանկահասակ երեխաներ են մեծանում: Եվ այստեղից էլ սկսվում են հիմնական խնդիրները, որոնք պատճառ են հանդիսացել սույն թեմայի հետազոտության համար: Բազմալեզվության դրական ու բացասական ազդեցությունը երեխայի մտածողության և խոսքի զարգացման վրա պարզելու նպատակով կցանկանայինք նաև հստակեցնել «համաժամանակյա և տարաժամանակյա երկլեզվություն», ինչպես նաև «բնական և արհեստական երկլեզվություն» հասկացությունները:

Համաժամանակյա երկլեզվակրությունը երկու լեզուների գրեթե հավասարաչափ տիրապետումն է մինչև երեք տարեկան հասակը: Դա մանկական երկլեզվակրության առաջին փուլն է: Այդ շրջանում ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոսքի հապաղումն ու երկու լեզուների միախառնումը: Սակայն մոտավորապես չորս տարեկանում երեխան սկսում է տարբերել լեզուները, և այդ երևույթներն արագ անհետանում են: Այդ գործընթացին նպաստում են նաև արտաքին գործոնները: Քանի որ առաջին փուլում երեխայի խոսքի ձևավորումը հիմնականում կատարվում է ընտանիքում, շատ կարևոր է, որ ծնողները կամ ընտանիքի մյուս ավագ անդամներն իրենց խոսքում չխառնեն երկու լեզուները:

Տարաժամանակյա երկլեզվակրության դեպքում երեխայի երկրորդ լեզվի իմացությունը ձեռք է բերվում մի քիչ ավելի ուշ՝ խարսխվելով մասնավորապես հիմնական լեզվի իմացության վրա: Այս պարագայում այն լեզուն, որով խոսում են ընտանիքում, գրեթե միշտ գերակա է, առաջնային: Երկրորդ լեզվի յուրացումը տեղի է ունենում առաջնային լեզվի հիմքի վրա, որի ընթացքում ի հայտ են գալիս թարգմանական սխալներ լեզվի տարբեր մակարդակներում՝ բառային, քերականական, արտասանական, իմաստային, խոսույթային և այլն [4, էջ 26]:

Իսկ ի՞նչ է բնական երկլեզվությունը, և ինչպե՞ս տարբերել այն արհեստական երկլեզվությունից: Եթե մարդիկ, որոնք շփվում են երեխայի հետ երկու լեզվով, այդ լեզուների կրողներ են, ապա երեխան գտնվում է բնական երկլեզվության պայմաններում: Սա տեղի է ունենում, օրինակ, խառն ամուսնությունների ժամանակ (ծնողներից յուրաքանչյուրն իր մայրենի լեզվի կրողն է) կամ ազգային փոքրամասնությունների ընտանիքներում (տանը երեխան հաղորդակցվում է այն լեզվով, որը կրում է տվյալ ընտանիքը, իսկ փողոցում, մանկապարտեզում՝ այն լեզվով, որը կրում է տվյալ հասարակությունը):

Այն իրավիճակը, երբ ծնողները, հիանալի տիրապետելով օտար լեզվին, որոշում են կայացնում իրենց երեխային դաստիարակել երկլեզվությամբ (բիլինգվիստական

դաստիարակություն), կոչվում է արհեստական բիլինգվիզմ: Տարբերությունն այն է, որ որքան էլ անձը հիանալի տիրապետի օտար լեզվին, միևնույնն է, նա այդ լեզվի կրողը չէ, հետևաբար նաև տվյալ մշակույթի կրողը չէ: Արհեստական երկլեզվության պայմանները չեն կարող լիովին փոխարինել բնական պայմաններում երկլեզու միջավայրին, սակայն դրանք տալիս են շատ լավ արդյունքներ, և եթե խոսում ենք երեխայի օտար լեզվի կրթության մասին, ապա միանշանակ այդ մեթոդը լավագույնն է: Երեխայի խոսքի զարգացումը արհեստական երկլեզվության պայմաններում գրեթե չի տարբերվում բնական երկլեզվության պայմաններում զարգացող երեխայի խոսքից. այն հիմնվում է մարդկանց լեզվահիմացության մակարդակի վրա, թե որքանով են նրանք տիրապետում լեզվին և ինչպես են ուսուցանում լեզուն երեխային [4, էջ 32]:

Անդրադառնալով երեխայի մտածողության և խոսքի ձևավորման ու զարգացման վրա բազմալեզվության ազդեցությանը՝ նախ կցանկանայինք ամփոփ ներկայացնել երեխայի խոսքի օնտոգենեզը՝ դիտարկելով խոսքի զարգացման հիմնական փուլերը և դրանց առանձնահատկությունները [1, էջ 37]:

Փուլ 1. Նախախոսքային. ներառում է 0-1.9 տարիքային միջակայքը:

- Զարգանում է շփման պահանջը, որի ծագման հիմքում մարդու կենսական գոյության պահանջն է, այսինքն՝ երեխայի մոտ առաջանում է շփման պահանջ մեկ այլ մարդու հետ, որը կապահովի իր գոյությունը:
- Ձևավորվում և զարգանում է նախալեզուն (պրոտոլեզուն), որն առաջնային մինչլեզվական, հարալեզվական հաղորդակցման համակարգն է՝ հիմնված նախանշանների վրա: Նախալեզուն երեխայի կյանքի առաջին երկու տարիների շփման հիմնական միջոցն է:
- Նախալեզվի ձևավորմանն ու զարգացմանը զուգահեռ զարգանում է երեխայի ձայնային ինքնաարտահայտումը հետևյալ հաջորդականությամբ՝ ճիչ, գոգղանք (աղու-աղու), թոթովանք: Ճիչը երեխայի ինքնապաշտպանական ռեակցիան է, որը տևում է երկու ամիս, և դրան փոխարինելու է գալիս գոգղանքի փուլը, որը երկուսից չորս ամսական երեխաների հնչյունների արտաբերումն է: Թոթովանքը հնչյունների արտաբերումն է վանկի կրկնապատկման միջոցով, որը ձևավորվում է էխոլալիայի մեխանիզմի հիման վրա: Էխոլալիան երեխայի կողմից լսվող ձայների անգիտակցական նմանակումն է, ուստի թոթովանքը բացառապես հասարակական երևույթ է, իսկ գոգղանքը՝ բնածին:

Փուլ 2. Լեզվաճանաչողական. ներառում է 1.9-6 տարիքային միջակայքը և ենթադրում է երեխայի խոսքի ձևավորումը: Այս փուլում՝

- երեխայի խոսքը դառնում է իրավիճակային և երկխոսական,
- այն դեռևս սահուն չէ և ընկալելի է միայն որոշակի հաղորդակցական իրավիճակի մանրամասներին ծանոթ մարդկանց,
- երեխայի խոսքին բնորոշ է ստեղծարարությունը: Երեխան ունի ճանաչելու մեծ ցանկություն և բնածին ինտուիցիա, որով բացատրվում այն, որ երեխան, ունենալով վառ երևակայություն, անընդհատ նոր ուղիներ է փնտրում: Ժամանակի ընթացքում երեխայի բարձրաձայն խոսքին փոխարինում է ներքին խոսքը: Նա սկսում է հաճախ շշուկով խոսել, շարահյուսորեն կազմում է ավելի սեղմ նախադասություններ՝ գործածելով ավելի շատ բայաձևեր:

Փուլ 3. Խոսքային. ներառում է 6 տարեկանից բարձր տարիքը: Այս տարիքում երեխայի մոտ ավարտվում է խոսքային օնտոգենեզի լեզվաճանաչողական շրջափուլը: Երեխան տիրապետում է լեզվին՝ որպես հնչյունային, քերականական, բառային կա-

նոնների համակարգի: Այսպիսով՝ նրա մոտ ձևավորվում է լեզվական ունակությունը, որի արդյունքում վեց տարեկանից երեխան կարողանում է կապակցված տեքստ կառուցել, ինչպես նաև սկսվում է գրավոր խոսքի առանձնահատկությունների յուրացման շրջանը [1, էջ 46]:

Մտածողության ուսումնասիրությունների հիմնարար հարցերից մեկը վերաբերում է մտածողության և խոսքի կապին: Կոգնիտիվ զարգացման տեսությունը պնդում է, որ երեխայի մտածողության զարգացումը մինչև որոշակի տարիք անկախ է խոսքից: Վերադառնալով մարդու խոսքի զարգացման լեզվաճանաչողական փուլին՝ հարկ է նշել, որ մոտավորապես երկու տարեկան հասակում լեզվի և մտածողության զարգացման ուղղությունները, որոնք մինչ այդ առանձին էին զարգանում, միավորվում են, համընկնում են իրենց զարգացման բովանդակությամբ, որի արդյունքում միտքը դառնում է լեզվական, իսկ խոսքը՝ մտածված [3, էջ 67]: Այսպես սկիզբ է առնում լեզվական օնտոգենեզի՝ մարդու խոսքի զարգացման լեզվաճանաչողական փուլը: Այս փուլում երեխայի ճանաչողական (մտավոր) և լեզվական զարգացումները համաչափ չեն ընթանում: Այս առումով Լ. Վիգոտսկին նշում է, որ երեխայի գիտակցության մեջ բառի ձևավորման իմաստային և հնչյունային կողմերը համաչափ չեն զարգանում: Այսինքն՝ բառն անոթ է, որը մարդուն տրվում է պատրաստի ձևով, իսկ դրա բովանդակությունը նա պետք է ինքնուրույն լցնի [1, էջ 39]:

Փորձի կուտակումն ու արտասանական ունակության զարգացումը նպաստում են երեխայի բառապաշարի ընդլայնմանը, ստիպում են, որ երեխայի ուղեղը հստակեցնի բառերի իմաստները՝ բառում դրա իմաստների ընդհանրացման հիմքերը բացահայտելու միջոցով: Այսպես հետզհետե երեխայի գիտակցության մեջ ձևավորվում են հասկացություններ: Հասկացության ձևավորումը մի քանի փուլ է անցնում:

Փուլ 1. Ընդհանրացում՝ «կույտի» սկզբունքով, սա նախահասկացական մտածողության շրջանն է, երբ երեխան գործածում է բառեր, որոնց իմաստային բովանդակությունն իր գիտակցության մեջ խայտաբղետ է և դեռ հստակ չձևավորված: Իրական աշխարհի մասին փորձ չունենալու պատճառով երեխան մեկ բառի իմաստային կառուցվածքում միավորում է իրար հետ կապ չունեցող, պահատական և անհամատեղելի նշանակություններ:

Փուլ 2. Ընդհանրացում՝ «ամբողջության» սկզբունքով, սա կեղծ հասկացական մտածողության շրջանն է, երբ երեխան սկսում է խոսել թերձևավորված, կեղծ հասկացություններով, որոնք նրա գիտակցության մեջ ձևավորվել են առարկաների ու երևույթների նմանությունների միավորմամբ՝ հաշվի չառնելով դրանց էական հատկանիշները: Օրինակ, երբ երեխան չի ցանկանում որևէ բան անել, նա կարող է ասել՝ «Համով չէ» կամ «Փակ է» արտահայտությունը «Դա վատն է» կամ «Ես դա չեմ ցանկանում անել» ասելու փոխարեն: Հետզհետե երեխան դադարում է այսպիսի ամբողջություններ ձևավորել:

Փուլ 3. Ընդհանրացում, որի արդյունքում ձևավորվում են իրական հասկացություններ: Սա հասկացական մտածողությունն է: Այն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան կիրառում է բառերը՝ իր գիտակցության մեջ դրանց համար ունենալով լիարժեք հասկացություններ, որոնք ձևավորվել են իրական աշխարհի որոշակի առարկայի կամ երևույթի առաջնային, էական հատկանիշների հիման վրա [1, էջ 40]:

Ամփոփելով երեխայի խոսքի և մտածողության զարգացման առանձնահատկությունները՝ դիտարկենք զանազան գործոններով պայմանավորված և տարբեր հանգա-

մանքներում ձևավորվող երկլեզվության ու բազմալեզվության դրական և բացասական ազդեցությունը երեխայի խոսքի ու մտածողության զարգացման վրա:

Նախ անդրադառնանք վաղ հասակում երկլեզվության և բազմալեզվության թերություններին կամ բացասական կողմերին:

Այսպես՝ երկլեզվության թերություն կարող է համարվել թերլեզվակրությունը (semilingualism): Սա այն դեպքն է, երբ երեխան ունենում է դժվարություններ՝ յուրացնելու երկու լեզուներն էլ, տիրապետում է երկու լեզուներին էլ մասնակիորեն [5, էջ 49]: Թերլեզվակրությունից խուսափելու համար ծնողները պետք է ունենան հստակ մշակված ծրագիր, թե ինչպես երեխան պետք է յուրացնի լեզուները: Ամենատարածված ձևն այն է, երբ ծնողներից յուրաքանչյուրը խոսում է երեխայի հետ մեկ այլ լեզվով: Շատ ծնողներ ունեն մտավախություն, որ անմիջապես երկու լեզվի յուրացման դեպքում մեկ (գերակա՝ դոմինանտ) լեզվային համակարգն ազդում է երկրորդի վրա, ինչի արդյունքում տեղի է ունենում նրանց խառնում, որը հանգեցնում է մի շարք խոսքային ու լեզվական դժվարությունների: Նման դեպքերում հաճախ հանդիպում են հնչարտաբերման խնդիրներ (երկու լեզվում), շեշտադրության սխալներ, քերականական կառույցների սխալ գործածություն, որպես հետևանք՝ գրի ու ընթերցանության տիրապետման դժվարություններ: Բոլոր երեխաները իրենց խոսքի զարգացման ընթացքում անցնում են, այսպես կոչված, «ավտոնոմ խոսքի»: Այդ ժամանակահատվածը բնութագրվում է նրանով, որ երեխան ասում է բոլոր բառերն իր ձևով: Նա կրճատում է բառերը, բաց է թողնում վանկերը, տառերը, փոխարինում է դրանք այլ վանկերի կամ տառերի հետ կամ, ընդհակառակը, ավելացնում է տառեր ու վանկեր, որոնք բառում չկան [6, էջ 78]: Այս երևույթը առկա է հատկապես այն երեխաների մոտ, որոնք միաժամանակ տիրապետում են երկու լեզուների: Այդ ժամանակահատվածը երկլեզու երեխաների մոտ կոչվում է շրջան՝ խառնված երկու լեզուներով, քանի որ նրանք երկու տարբեր լեզուներից ընտրում են այն բառերն ու արտահայտությունները, որոնք ավելի հեշտ է արտասանել և կիրառում են դրանք նախադասության մեջ՝ անկախ այն հանգամանքից, թե իրենց ինչ լեզվով են դիմում: Օրինակ՝ երեխան, որն ունի ռուսերեն և անգլերեն երկլեզվակրություն, իր նախադասությունները կարող է կառուցել հետևյալ կերպ. «Дай мне ball»: Ինչո՞ւ «ball», քանի որ այն ավելի հեշտ է ասել, քան «мяч» բառը ռուսերենում: Բազմալեզու երեխան, որը միաժամանակ յուրացնում է հայերենը, ռուսերենն ու անգլերենը, կարող է մայրիկի հետ խաղի ընթացքում ասել. «Давай, мама, давай, good!», կամ «Մամա, о нет, this apple for you!»: Եվ այստեղ մի առանձին հետազոտության առարկա կարող է լինել այն հարցը, թե, բացի հեշտ և դժվար կողմերից, էլ ո՞ր գործոններն են ազդում այս կամ այն լեզվի տվյալ բառը ընտրելու հանգամանքի վրա, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հույզերի ու դիրքորոշման արտահայտմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հարցում երեխաները ևս ունեն ընտրություն և գերապատվությունը տալով, օրինակ, ռուսերենին՝ կարող են առավել վճռական արտահայտել իրենց «Да!»-ն կամ «Нет!»-ը տվյալ լեզվով՝ չնայած այն հանգամանքին, որ փայլուն տիրապետում են նաև «Այո՛» և «Ո՛չ» հայերեն համարժեքներին: Յուրաքանչյուր երեխա իրականացնում է բառապաշարի իր սեփական, անհատական ընտրությունը երկու լեզուների միջև քանի դեռ խառնաշփոթ վիճակում են երկու կամ երեք լեզուները:

Ռուսալեզու երկլեզվակիր երեխաների հայերեն խոսքում շատ սխալներ են հանդիպում՝ պայմանավորված ռուսերենի քերականական կառույցների ազդեցությամբ՝ մասնավորապես նախդիրների և նախդրավոր արտահայտությունների սխալ թարգմանությամբ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

- Իմ մոտ նոր խաղալիք կա (У меня новая игрушка.): Ես նոր խաղալիք ունեմ:
- Ինձ ցուրտ է: (Мне холодно.) Ես մրսում եմ:
- Նվագում եմ ջութակի վրա: (Играю на скрипке.) Նվագում եմ ջութակ:

Հետևյալ օրինակներում ցույց են տրված սխալներ միաժամանակ բառային ու քերականական մակարդակներում:

- Մաման ակնոցներ չի տանում (Мама не носит очки.): Մաման ակնոց չի կրում:
- Դեդուլին գնում են այս ակնոցները (Дедушке идут эти очки.): Պապիկին սազում է այս ակնոցը:

Սխալները կարող են հանդիպել նաև շարահյուսական մակարդակում: Ինչպես գիտենք, հայերենի շարադասությանը առավել բնորոշ է ենթակա + ուղիղ խնդիր + ստորոգյալ հաջորդականությունը: Ռուսերենին ավելի բնորոշ է ենթակա + ստորոգյալ + ուղիղ խնդիր կառույցը: Արդյունքում կարող են կազմվել այսպիսի նախադասություններ.

- Ի՞նչ ես անում: Ես լսում եմ երաժշտություն (слушаю музыку) – Երաժշտություն եմ լսում:
- Մաման ի՞նչ է անում: Պատրաստում է ճաշ: (готовит обед) – Ճաշ է պատրաստում:

Ուսումնասիրելով հայկական միջավայրում ապրող ռուսալեզու երեխաների խոսքը՝ կարելի է եզրահանգել, որ երեխայի խոսքի ձևավորման գործընթացում շատ կարևոր է ընտանեկան ու սոցիալական միջավայրի դերը: Ինչպես պարզ դարձավ բերված օրինակներից, երկլեզու երեխաները ավելի քիչ են պարզեցնում խոսքի ձևը, քան բազմալեզու երեխաները, սակայն դրա փոխարեն նրանք ընտրում են համապատասխան բառը մեկ այլ լեզվով: Եվ միայն այն դեպքում, երբ նույն բառն արտասանելը դժվար է երկու լեզուներում, երեխան պարզեցնում է դրանք: Լեզուների խառնաշփոթ այս ընթացքը շարունակվում է մինչև 3-3.5 տարեկանը, որին հաջորդում է լեզուների տարբերակման փուլը (դիֆերենցում), և երեխան գիտակցաբար ջանքեր է գործադրում՝ տվյալ լեզվով գտնելու համարժեք այն բառը, որն արդեն հայտնի է իրեն մյուս լեզվում: Սակայն հաճախ այս փուլը կարող է ավելի երկար ձգվել՝ պայմանավորված 2.5-3.5 տարեկանի տարիքային ճգնաժամից բխող սոցիալ-հուզական, երբեմն վարքային խնդիրներով: Երկու լեզուների միաժամանակյա կամ հաջորդաբար տիրապետումը հաճախ դառնում է փոքրիկի հոգնածության պատճառ և կարող է հանգեցնել կենտրոնական նյարդային համակարգի աշխատանքի տարբեր խաթարումների, ընդհուպ մինչև կակազության կամ նույնիսկ կեղծ աուտիստիկ վարքի [8, էջ 45]: Այս դեպքերում երեխան ընդհանրապես դադարում է օգտվել որևէ լեզվական համակարգից կամ շատ հազվադեպ է դիմում խոսքային հաղորդակցմանը: Եթե երեխայի խոսքը լիարժեք ոչ մի լեզվով ձևավորված չէ, ապա անկանոն, բազմալեզու, խառնաշփոթ միջավայրը կարող է խաթարել երեխայի խոսքային մտածողության ձևավորման բնականոն ընթացքը, մասնավորապես հասկացությունների ձևավորման փուլային գործառությունների հաջորդական ընթացքը, ինչի արդյունքում խոչընդոտվում է կամ նույնիսկ արգելակվում է իրական հասկացությունների ձևավորման գործընթացը, որը կարող է հանգեցնել հոգեբանական սթրեսների: Երեխան դառնում է ինքնամփոփ, դժվարություններ են առաջանում սոցիալական ադապտացիայում: Երկու և ավել լեզուների յուրացման այս փուլում շատ երեխաների մոտ առաջանում է նաև, այսպես կոչված, «միջանկյալ լեզու», որում երեխաների կողմից բառերի ստեղծումը արտացոլում է լեզվի յուրացման ստեղծագործական բնույթը, և նույնպես ենթարկվում է որոշակի օրինաչափությունների [7, էջ 81]: Երկու և ավել լեզուներով բառապաշարի հետագա զարգացումը կախված է նրանից, թե

որ լեզվով է երեխան գերադասում շփվել: Բանավոր, մտավոր և հոգեբանական զարգացման ցուցանիշները երկլեզու երեխայի մոտ ոչ մի կերպ չեն զիջում այն երեխային, որը դաստիարակվել է բազմալեզու միջավայրում: Համաժամանակյա երկլեզվության պայմաններում մեծացող երեխան, որը չունի խոսքի հապաղում, հիմնականում 4 տարեկանից հետո տիրապետում է երկու լեզուներին համարժեք և կիրառում է դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին, համապատասխանորեն արձագանքում խոսքային իրավիճակին, այսինքն՝ պատասխանում է այն լեզվով, որով նրան դիմում են:

Սակայն խնդիրները անխուսափելիորեն սկսվում են երեք և ավելի լեզուների առկայության պայմաններում մեծացող երեխայի խոսքում՝ դանդաղեցնելով վերջինիս զարգացման ընթացքը և ստեղծելով խոչընդոտներ երեխայի խոսքի և մտածողության զուգահեռ զարգացման համար: Մտածողության, լեզվի և խոսքի այս «իսկական խառնաշփոթի» արդյունքում երեխայի խոսքի զարգացումը հատկապես լեզվաճանաչողական փուլում կարող է արգելակվել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով.

- արդյո՞ք երեխան տվյալ լեզուներով կանոնավոր շփվում է հարազատների հետ, թե՝ ոչ,
- եթե երեխան մեծանում է խառն ամուսնությամբ ընտանիքում, ապա արդյո՞ք ծնողները կանոնավոր շփվում են երեխայի հետ միայն իրենց մայրենի լեզվով, թե՝ ոչ,
- որքա՞ն ժամանակ է երեխան անցկացնում էկրանների առջև, դիտում է արդյո՞ք վառ, փոփոխական պատկերներով գերխթանող հոլովակներ, մուլտֆիլմեր, թե՝ ոչ,
- ո՞ր լեզուներով է երեխան դիտում կամ լսում տեսալսողական նյութեր.
- արդյո՞ք ընտանիքի անդամները տրամադրու՞մ են բավարար ժամանակ երեխայի հետ հաղորդակցվելու, սոցիալ-հուզական կապ ստեղծելու, խաղալու, միասին հեքիաթներ ընթերցելու, դրսում ժամանակ անցկացնելու համար, թե՝ ոչ.
- արդյո՞ք երեխան մեծանում է միայնակության պայմաններում, թե՞ հաճախում է մանկապարտեզ,
- արդյո՞ք երեխան ունի խոսքի հապաղում, նյարդահոգեբանական, հաղորդակցական, վարքային խնդիրներ, թե՝ ոչ:

Ամփոփելով բազմալեզու միջավայրի ազդեցության ուսումնասիրությունը երեխայի խոսքի և մտածողության զարգացման վրա՝ հարկ ենք համարում նշել նաև երկլեզվության և բազմալեզվության առավելությունները: Այսպես՝ երկլեզվակիր երեխաներն ավելի հեշտ են ընկալում երկրորդ, երրորդ և նույնիսկ չորրորդ լեզուները: Համաժամանակյա բազմալեզու միջավայրում երեխան կարող է ընկալել ոչ ավելի քան չորս լեզու, իսկ այդ չորս լեզուների ընկալումը կհաջողվի միայն երեխայի հետ ինտենսիվ աշխատելու դեպքում: Ապացուցված է, որ բազմալեզու երեխաները ավելի ստեղծարար են և ավելի հեշտ են որոշումներ կայացնում ու կենտրոնանում: Երկլեզվակիր երեխաներն առավել հնարավորություններ ունեն ավելի շատ մարդկանց հետ հաղորդակցվելու: Ինչպես գիտենք, լեզվամտածողությունը կապված է մարդու աշխարհայացքի հետ: Քանի որ լեզուն մշակույթի ամենակարևոր տարրերից է, ավելի քան մեկ լեզու իմանալով՝ երեխան պատկանում է ավելի քան մեկ մշակույթի, ինչն էլ նպաստում է ազատ մտածելակերպին ձևավորմանը և աշխարհի քաղաքացի լինելուն:

Եզրակացություններ: Այսպիսով՝ բազմալեզու միջավայրը վաղ մանկական տարիքում կարող է դառնալ երեխայի խոսքի բնականոն զարգացումը վտանգող ռիսկի գոր-

ծոն: Երկուսից ավելի լեզուների համաժամանակյա յուրացման դեպքում մեկ (գերակա՝ դոմինանտ) լեզվի համակարգն ազդում է երկրորդ, երրորդ լեզվի յուրացման վրա, ինչի արդյունքում տեղի է ունենում դրանց միախառնում, որը հանգեցնում է խոսքային ու լեզվական մի շարք դժվարությունների, քանի որ խաթարվում է երեխայի խոսքային մտածողության ձևավորման և զարգացման գործընթացը: Այսպիսով, եթե երեխայի խոսքի զարգացման նախալեզվական կամ լեզվաճանաչողական փուլերից որևէ մեկում նկատվում է հապաղում, ապա անհրաժեշտ է ազատել երեխայի ուղեղը սթրեսից, խառնաշփոթից, հնարավորինս բացառել այլ լեզուները նրա անմիջական շրջակա միջավայրից, սահմանափակել օտարալեզու մուլտֆիլմերը, զանազան գերխթանող տեսահոլովակները և աջակցել նրան հաղթահարել խոսքի զարգացման այդ փուլը մայրենի լեզվով՝ ապահովելով նրա հետ սոցիալ-հուզական ակտիվ հաղորդակցական կապ և թողնելով մյուս լեզուների ուսուցումը կյանքի հետագա փուլերին, ինչն իսկապես կարող է բացառիկ դրական ազդեցություն ունենալ երեխայի կյանքում նրա անձի զարգացման ու աշխարհայացքի ձևավորման վրա:

THE IMPACT OF MULTILIGUAL ENVIRONMENT ON CHILD'S THINKING AND SPEECH DEVELOPMENT

Poghosyan Naira
PhD, Associate-Professor
Brusov State University,
Yerevan State University
nairapoghosyan@yahoo.com

Abstract

Facing the social and cultural challenges of modern globalizing world, multilingualism and its impact on the formation and development of human thinking and speech processes are of unprecedented interest, because the inevitable involvement of modern information technologies in that process leads to highly contradictory results. The study of this issue currently serves as a subject of multi-level, interdisciplinary research and has gained undeniable actuality in recent decades. Thus, from the viewpoint of language education policy, plurilingualism has been considered in a positive light, underlining the importance and advantages of mastery of several languages by a person in the modern world, whereas from the point of view of Psycholinguistics, the simultaneous or nonparallel presence of several languages in the life of a child, especially in early childhood, can cause serious developmental language disorders (DLD). From the point of view of Neurolinguistics, a multilingual environment can have an exceptionally positive effect on the variety of neural network connections, that are continuously formed among nerve cells in a child's developing brain. And learning new languages in lifetime, thus can prevent from many diseases, such as Alzheimer's disease, Parkinson's disease, as well as age-related dementia. Consequently, it emerges that plurilingualism, itself, is of great interest to a wide range of researchers, because it can have a fatal role and significance in a person's life, depending on: when (at what age and how long), and how (in what conditions) it was formed. Our goal in the current article is to clarify the content of the concept of plurilingualism, highlight the ontogenesis of thinking and speech, that is, the stages of their development in a person's life since his/her birth, as well as to study and bring out the negative and positive effects that multilingual environment can have on a child's thinking and speech development. Our focus in this study will be especially on children aged zero to six, because the main problems that multilingualism basically leads to, are mostly found among children of this age.

Keywords: *bilingualism, plurilingualism, verbal thinking, speech development, information technology*.

ВЛИЯНИЕ МНОГОЯЗЫЧНОЙ СРЕДЫ НА МЫШЛЕНИЕ И РЕЧЕВОЕ РАЗВИТИЕ РЕБЕНКА

Погосян Наира
Кандидат педагогических наук, доцент
Государственный университет имени В. Брюсова,
Республика Армения
nairapoghosyan@yahoo.com

Аннотация

В условиях социокультурных вызовов современного глобализирующегося мира многоязычие и его влияние на формирование и развитие мышления и речи человека представляют беспрецедентный интерес, поскольку неизбежное вовлечение в этот процесс современных информационных технологий приводит к весьма противоречивым результатам. Изучение вопроса влияния многоязычной среды на мышление и речевое развитие ребенка является предметом многоуровневых, междисциплинарных, межпрофессиональных исследований и приобрело неоспоримую актуальность в последние десятилетия. Таким образом, с точки зрения политики языкового образования вопрос заслуженно постоянно рассматривался в положительном свете, подчеркивалась важность владения человеком несколькими языками в современном мире, его преимущества и положительные стороны, между тем, с точки зрения психолингвистики, одновременное или разновременное присутствие нескольких языков в жизни ребенка, особенно в раннем детстве, может вызвать серьезные трудности речевого развития.

С точки зрения нейролингвистики многоязычная среда может оказать исключительно положительное влияние на разнообразие сетей, микросетей, а также на микро-, макросети, которые постоянно формируются между нервными клетками в развивающемся мозге ребенка. Изучение человеком новых языков в течение жизни в целом может предотвратить многие заболевания, такие как болезни Альцгеймера, Паркинсона, возрастное слабоумие и т.д. Таким образом, становится ясно, что само по себе многоязычие представляет большой интерес для широкого круга исследователей, потому что оно может иметь роковую роль и значение в жизни человека, в зависимости от того, когда (в каком возрасте и за какой промежуток времени), и как (при каких условиях) оно сформировалось. В данной статье нашей целью является уточнение содержания понятия «многоязычие человека», отдельное представление онтогенеза мышления и речи, а именно этапы их развития в жизни человека, начиная с его рождения, а также изучение и выявление положительных и отрицательных последствий, которые многоязычие может оказать на мышление и речевое развитие ребенка. Целевой аудиторией исследователей являются дети в возрасте от нуля до шести лет, поскольку основные проблемы, к которым приводит многоязычие, встречаются преимущественно у детей этого возраста.

Ключевые слова: *билингвизм, многоязычие, речевое мышление, речевое развитие, информационные технологии.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Թովմասյան Հ., Հոգելեզվաբանություն, Երևան, «Լիմուշ», 2022, 139 էջ:
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, թարգմանություն, «Նորք գրատուն», 2005, 278 էջ:
3. Ցեյտլին Ս., Լեզուն և երեխան. Երեխայի խոսքի լեզվաբանություն, Մ., 2000, 240 էջ:
4. Bialystok E., Bilingualism in Development: Language Literacy and Cognition, Cambridge University Press, 2001, 288 p.
5. Field J. Psycholinguistics. The Key Concepts, London-New York: Routledge, 2004, 388 p.
6. Залевская А., Введение в психолингвистику, М.: РГГУ, 2007, 196 с.
7. Зимняя А., Лингвопсихология речевой деятельности, Издательство Московский психологосоциальный институт, Воронеж, 2001, 448 с.
8. Пашук С., Психология речи. Спб.: Издательство МИУ, 2010, 296 с.
9. National Institute of Health, USA, Bilingualism for Dementia: Neurological Mechanisms Associated with Functional and Structural Changes in the Brain - https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6868000/, 09.11.2023

Получено: 20.03.2024 *Received: 20.03.2024*
Рассмотрено: 08.04.2024 *Reviewed: 08.04.2024*
Принято: 10.05.2024 *Accepted: 10.05.2024*

© The Author(s) 2024
This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License